



## ԵԶՆԻԿ ՔՀՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

### **ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՇԱԽՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ\***

Քրիստոս իր աշակերտներին տվեց երկու իշխանություն՝ քահանայական և քառօչական։ Քրիստոսի առաքյալները այս իշխանությունները հաղորդեցին իրենց հաջորդներին, որ և սերնդից սերունդ փոխանցվելով հնագեց է մեզ, մեր օրերը։ Քահանայական իշխանության գործադրման համար Եկեղեցու ծոցում ստեղծվել է Ավագանութական կարգ՝ սարկավագության, քահանայության և եպիսկոպոսության աստիճաններով։ Իսկ քարոզչական իշխանության գործադրման համար առաջացել է վարդապետների կարգը, որ այսօր Հայ Եկեղեցում գոյություն ունի երկու աստիճաններով՝ Մասնավոր վարդապետություն և Մեծ կամ, հաչակն ընդունված է այսօր՝ Ծայրագույն վարդապետություն։ «Սահմանք կանոնաց սուրբ առաքելության Թաղէոսի ի քաղաքին Ուրիշայ ի լուսարուել զնոսա» կանոնախմբի առաջարանում հստակորեն արտահայտված է քահանայական և քառօչական կարգերի տարրերակումը։ Այսպես, ասված է, որ առաքյալները «ձեռնադրեցին եպիսկոպոսուն, քահանայ և սարկավագուն, և հաստակեցին վարդապետ արէնսուլուց»<sup>1</sup>։

Այսօրվա այս փոքրիկ գեկուցումը նվիր-

ված է վարդապետական կարգին՝ Հայ Եկեղեցու պատմության խորքի վրա դիտված։

Թյուրիմացությունից խուսափելու համար պետք է նշել, որ Հայ Եկեղեցում վարդապետական կարգը երբեք քահանայական աստիճանից անկախ գոյություն չի ունեցել։ Հայ Եկեղեցու քազմադարյան պատմության ընթացքում գործող բոլոր վարդապետները ունեցել են քահանայական կամ եպիսկոպոսական աստիճանները։ Վարդապետներ եղել են այն քահանաները (կուսակրոն և ամուսնացյալ) որ եպիսկոպուսները, որոնք հատուկ արտօնությամբ իրավունք են ատացել քարոզելու և ուսուցանելու։ Այդ արտօնությունը նրանց տրվել է վարդապետական գավազանի տվյալներում։ Ի տարբերություն եպիսկոպոսական գավազանի, որ խորհրդանշում է քահանայական իշխանությունը, վարդապետական գավազանը խորհրդանշում է քարոզչական-ուսուցողական իշխանությունը։

Հայ Եկեղեցու պատմության մեջ վարդապետներ հիշվում են դեռ Դ դարում։ Այսպես, Զենոք Գրակի անունով հայտնի «Պատմութիւն Տարօնոյ» երկու ավում է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայում ձեռնադրություն ստանալուց հետո, վերադարձին «մնալոյ ժամանակս ինչ ի Սե-

\* Զեկուցում կարդացված Վեհարանում 1987 թվականի փետրվարի 25-ի միաբանական ժողովին։

բատիայ, հաւաքեալ դասս կրամաւորաց և զոման վարդապետս կոչէր յաղեռսանդրիայք... Եւ անտի եկեալ անցաք մինչև ցթորդան և անդ թողաք զՍուրբինու Եփեացի վարդապետն ամենայն գաւառացն»<sup>2</sup>: Փալստոս Բուզանդը խոսելով Հայաստանու (Տարունու) անապատականության հիմնադիրներից Գինդի մասին (Դ. Կենին) ասում է. «Եր գորու աքեղայից և վարդապետ միանձանց և առաջնորդ մենակեցաց և վերակացու վաներայից և ուսուցիչ ամենայն անապատարաց... առ հասարակ ամենայն մարդիկ երկրին հայոց անուանեալ կոչէին ամա վարդապետ»<sup>3</sup>: Տիրան թագավորը, կուրանալոր հետո, վարդապետ է կոչում իր հրամանով նահատակված Հուսիկ կաթողիկոսին և Աշտիշատի առաջնորդ Դաճիել ասորի բորեալիսկոպիմբ<sup>4</sup>: Փալստոս հիշում է նաև Ծաղիտա և Եպիփան վարդապետներին, երկուսն էլ Դաճիել ասորու աշակերտները, որոնցից Ծաղիտա Դաճիելի կողմից իսկ Եշանակվել էր «Կորդուաց վարդապետ», իսկ Եպիփանը՝ «գաւառին Աղձնեաց և մեծաց Ծոփաց»<sup>5</sup>: Վարդապետներ են կոչվել նաև Ս. Գրիգոր Լուսավորիչը<sup>6</sup>, Մեծն Ներսևս հայրապետը<sup>7</sup> և որիշներ:

Եղարի վարդապետներից հայ պատմիների երկերում են Ս. Սահմակ Պարթևը<sup>8</sup>, Ս. Մեսրոպ Մաշտոցը<sup>9</sup>, Եղիշեն<sup>10</sup> և որիշներ: Հանրավոր չէ այս փոքրիկ գեկուցման մեջ հիշել այն բոլոր վարդապետներին, որոնք, լինելով իրենց կոչմանը արժանի հովիվներ, միշտ անաղարտ են պահել ու մնենել Հայ Եկեղեցու վարդապետությունը և կրթել, դաստիարակել Հայ Եկեղեցու զավակներին:

Ինչպես նկատեցինք արդեն, վարդապետներ են եկել ոչ միայն քահանայական աստիճան ունեցող հոգևորականները, այլ նաև եպիսկոպոսներ և նույնիսկ կաթողիկոսներ: Եվ այս ոչ միայն Հայ Եկեղեցու նախնական շրջանում, այլև նույնիսկ մինչև վերջին դարերը: Բերենք միայն մի քանի օրինակ. Թովմա Արծունու պատմության 1303 թ. ընթօրինակված ձեռագրի հիշատականում կարդում ենք. «ի խնդրոյ աստուածարեալ գիտնական և արդինակար վարդապետի, միանգամայն և արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ստեփանոսի, որ է ակն արևելեան և աթոռակալ մեծի Սիւնեաց տան»<sup>11</sup>: Եթ 1441 թ. հայոց կաթողիկոս է ընտրվում Կիրակոս Վիրապեցին, կաթողիկոսական ձեռնադրությունից հետո Հովհաննես Հերմոնացի վարդապետը նրան տախս է «զգաւազան վարդապետության»<sup>12</sup>: Հետաքր-

քրական է, որ երկու տարի անց, երբ Կիրապեցին գահինեց է արվում, նույն Հովհաննես Հերմոնացին «զգաւազան վարդապետութեան ի ձեռացն էաւ»<sup>13</sup>: Խաչատոր Չողայեցու «Պատմութիւն Պարսից» աշխատության մեջ կարդում ենք. «Եւ ահա այսպէս եղաւ վախճան և մահ երանելոյն առն Աստուծոյ Տեառն Ստեփաննեայ վարդապետի և կաթողիկոսի...»<sup>14</sup> (+1698): Առաքել Դավիթիծեցին հիշում է «Ծովմայ եպիսկոպոսն Տաթու, որ զին եղաւ վարդապետ»<sup>15</sup>: Վկայությունների այս շարքը կարելի է անվերջ երկարել: Հիշենք միայն նաև, որ մինչև այսօր է եպիսկոպոսները չեն, որ վարդապետական կոչում են ունեցել: Այսպէս, Ս. Ներսես Ծնորհալին կարգադրում է, որ այն եպիսկոպոսները, որոնք վարդապետական աստիճան չունեն, իրենց կողքին վարդապետներ ունենան<sup>16</sup>: Հիշենք նաև մի վկայություն ԺԷ դարից: Գրիգոր Դարանաղին, Ակարագրելով ԺԷ դարի երկորոր քառորդի դեպքերը, հիշում է մի Մակարի, որը «...ոչ եղաւ արժանի վարդապետական աստիճանի, բայց յետոյ եպիսկոպոս եղել ինուանց գեղշի վանաց մեծ աթոռոյն»<sup>17</sup>:

Վարդապետները չափազանց կարևոր դեր և նշանակություն են ունեցել Հայ Եկեղեցու կամքում: Հայոց եկեղեցական կանոնների համաձայն՝ վարդապետների պարտականությունների և իրավունքների մեջ են մտել.

ա.—Սահմանել զղացող մեղավորների (հոգևորական թե աշխարհական) ապաշխարության ժամկետը<sup>18</sup> և ապաշխարությունից հետո թույլատրել ս. խորհրդին մերձենալոյ<sup>19</sup>:

բ.—Բամադրել և իր բանադրածին արձակել (հոգևորականի թե աշխարհականի)<sup>20</sup>: Վարդապետը կարող է գրել քահանային իր աստիճանից, «վասն անարժան վարուց»<sup>21</sup>: Դվինի Բ ժողովի Ե կանոնը պատվիրում է, որ եկեղեցու պաշտոնյաները «կացցեն վարդապետին ի հնազանդութեան ամենայն յամարդութեամբ»<sup>22</sup>: Խակ Զ կանոնում կարդում ենք. «Ոմանք յոխտէ եկեղեցոյ զկարգ եւ զպաշտուան թողին... իշխանութիւն լիցի վարդապետին զնորհս եկեղեցոյն հանել յամափեացն եւ արժանաւոր քահանայից եւ պաշտամից եւ մերձաւորաց տալ»<sup>23</sup>.

գ.—Խրատել զատահակսն եւ զուլացեալ սըն ածել ի կարգ հաւատոյ... գործ է վարդապետի»<sup>24</sup>:

դ.—Հաստատել եկեղեցական՝ դալանարանական, ծիսական և այլ կարգություն կանոնին վերաբերվող սկզբումքները<sup>25</sup>:

Ե.—Տնօրինել ժառանգական և ամուսնալուծության հարցերը<sup>26</sup>: Հայոց Միհիթար Գոշի, Վարդապետները «գիտակ են իրաց դատաստանին»<sup>27</sup>:

Գ.—Միհիթար Գոշը իր Կանոնագրքի «Յաղագու դատաստանաց Վարդապետաց» գլուխ գրում է. «Իրաւունք են աւագ Վարդապետի ընդ հայտապետի և ընդ եպիսկոպոսի ի վիճակ եկանել ըստ նոցա կամացն, եւ կամ այլ ոք ըստ կամաց երկրությունց, զի մի արտաքը կանոնաց յեպիսկոպոսէ գործիցի ինչ, զի և եպիսկոպոսն միաբանութեամբ Վարդապետին զիրաքանչիր զկարգն գործիցէ»<sup>28</sup>: Հիշեցինք արդեն, որ Ս. Ներսէս Շնորհալին էլ պատվիրում էր, որ այն եպիսկոպոսները, որոնք Վարդապետական աստիճան չունեն, իրենց կողքին Վարդապետներ ունենան, որպեսզի նրանց խորհրդակցությամբ տնօրինեն իրենց թեմական գործերը: Հայոց Ս. Ներսէս Շնորհալու այդ Վարդապետների գործը պիտի լիներ «առաջին՝ զծառայակիցն կերպել ըստ աւետարանական հրամանին, երկրորդ՝ զթշնամին ճշմարտութեան՝ որք հակառակին հաւատոյն բանի և օրինաց Աստուծոյ և աւանութեանց Եկեղեցոյ՝ ըմբերանել աստուածային գիտութեամբն, զի մի զպարզամիտոն ի ժողովրդոց՝ պատիր բանիքն ձգեսցեն ի կորստեան իրեանց խորխրատ...»<sup>29</sup>:

Վարդապետի ունեցած դերի և նշանակության գիտակցությունը իր արտահայտությունն է գտել Ս. Գրիգոր Տաթևացու հետևյալ տողերում. «Վարդապետը և եպիսկոպոսը միմեանց օգնականք են ի յեկեղեցին եղեալ ի զգացումն հոգևոր ազդմանց... Վարդապետն իշխան է բանից, որ հրամայէ և ուսուցանէ. և եպիսկոպոսն իշխան է գործոց, որպէս արթեստառք: Վարդապետն է տեսական իմաստաւեն, որ բանի ուսուցանէ և խրատէ. և եպիսկոպոսն գործնական՝ որ զեօթն խորհուրդ Եկեղեցոյ կատարէ և կատարէ տայ: Վարդապետն դատաւոր է և քննող և եպիսկոպոսն վերակացու է և հրամայող ամենայն ժառանգաւորաց նորին»<sup>30</sup>: Կարծում եմ ավելորդ չէ Վարդապետի դերի և նշանակության մասին մեր խոսքը եղբափակել Միհիթար Գոշի հետևյալ դիպուկ առակով:

«Ըմբռնեցին զմէկ աշխարհակայն ի մեղքս և բերին առ սարկաւագն:»

Եւ սարկաւագն ասաց, թէ—Երեցն ասսէ եւ բան զիս մնծ է եւ ունի իշխանութիւն, առ այն տարէք:

Եւ տարին. եւ երեցն ասաց, թէ—Եպիսկոպոսն աստ է, առ նա տարէք:

Եւ տարին. եւ եպիսկոպոսն ասաց, թէ—Կաթողիկոսն աստ է, առ նա տարէք:

Եւ տարին. եւ կաթողիկոսն ասաց, թէ—Վարդապետն աստ է, առ նա տարէք:

Եւ տարին. Եւ Վարդապետն եղ կանոնն առ մժմանացոց ապաշխարութեամբ»<sup>31</sup>:

Ունենալով այսպիսի մեծ հեղինակություն, Վարդապետները, եպիսկոպոսների կողքին, միշտ Անրիկս են եղել Հայ Եկեղեցու ազգային-Եկեղեցական ժողովներում: Այսպէս, Անրինք միայն մի քանի օրինակ-Անր. 591 թ. հայ-բյուզանդական Եկեղեցիների միության համար Մորիկ կայսեր կողմից Կողսում գումարած ժողովին հայոց Կաթողիկոսարանը Անրկայացնում էին Վրթանես և Գրիգոր Վարդապետները<sup>32</sup>: 633 թ. Կարինի ժողովում Եզր Կաթողիկոսի հիմնական խորհրդատուն Թեղողորու Քոթենավոր Վարդապետն էր, այլ Վարդապետների հետ միասին<sup>33</sup>: 1036 թ. «Ժողովեալ Եպիսկոպոսաց և Վարդապետացն մերոց» գահընկեց են Խոչակում Դիոսկորոս հակածող կաթողիկոսին և կրկին հայրապետական գահին բազմեցնում Պետրոս Գետապարձին<sup>34</sup>: 1807 թ. Սահ ժողովին մասնակցում են 41 եպիսկոպոսներ, 10 Վարդապետներ և 7 վանահայրեր<sup>35</sup>: 1342 թ. Սահ ժողովին մասնակցում են 29 եպիսկոպոսներ և «Ծ գիւտոր Վարդապետք և 10 վանահայրք»<sup>36</sup> և այսն:

Այժմ մի քանի խոսք Վարդապետական Այսորի մասին: Կան մի շարք պատմական վկայություններ, որոնք ցույց են տալիս, որ եպիսկոպոսական Աթոռներին զուգահեռ գոյություն են ունեցել նաև Վարդապետական Աթոռներ: Այսպէս, երբ Ս. Մեսրոպը գնում է Կ. Պոլիս, Թեղողու կայսրը և Աստիկոս արքեպիսկոպուր (պատրիարքը) «Կարգեն զուրը Վարդապետն ընդ Վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յովհաննու Ուկերերանի և այլոց քաջաց և գիւտոր Վարդապետացն»<sup>37</sup>: Սու. Օքբելյանը, քաղելով Զ դարի պատմիչ Պետրոս Սյունեցու երկերից գրում է, որ Սյունեց Հովհակին եպիսկոպոսի ժամանակ (Դ դարի երկրորդ կես) «զՎարդապետութեանն Սիւնեաց զնամագահութեանն զմիւտ հրամանային Գլորգեալ՝ Շաղատայ Վարդապետի»<sup>38</sup>: Նոյն պատմիչը, խոսելով Մայուսաղայի (Է դ. առաջին կես) մասին, ասում է. «Եւ զի էր մեծարոյ և նախաքոռ ի Վարդապետ[ս]ն հայոց աթոռն Սիւնեաց. զի էր ի վաղենցոց մետք հրամայենալ ըգթարզմանութիւնն և զմեկնողութիւնն նոցա ունել ի սրբոցն Սահակայ և Մեսրոպայ, և

գլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետաց հայոց: Վասնորոյ տեսեալ յայնը մասմանակի պարտապացեալ իմաստալող ճառագայթիք զերամելին Մաքուսայա, վարժեալ և սենեալ ի նոյն տաճ կացուցանեն յատիճան վարդապետութեան եկեղեցոյ և նատուցանեն գլուխ ամենայն վարդապետացն ի վերայ բարձր և ահարկու ամբիոնի բարունարանին»<sup>39</sup>: Վարդապետական Աթոռի գոյության արձագանքերը պահպանվել են մինչև ԺԹ դարի ըսկիօքը: Բարգեն ծ. Վրդ. Կուլեսերյանը այս առթիվ գրում է. «Ուսուցչական կամ Վարդապետական աթոռը հին է իշխանական և դատողականին պէս. վարդապետը իր ուսուցիչ ի պաշտօնէ իրաւոնք ունի նատելու աթոռի վրա և այնպէս ուսուցանել կամ քարոզել... Մաշտոցի Կանոնին մէջ՝ ծայրագոյն վարդապետի պաշտօնը սահմանող գրուածին մէջ կա սա որոշ յայտարարութիւնը. «Նստէլ ի վերայ աթոռոյ և առնել զբեմբասացութիւնս»: Եւ ստուգի ծայրագոյն վարդապետներ՝ երկար ժամանակ պահած են եկեղեցոյ մէջ, մանաւանդ քարոզի ատեն աթոռ նատելու իրաւոնքը»<sup>40</sup>:

Հայ Եկեղեցու վաճեքը ճշանավորվել են իրենց վարդապետներով: Աչքի ընկնող վաճեքերում եղել են մեկից ավելի վարդապետներ: Միհթար Գոշը այս պարագային պատվիրում է. «Եթէ պատահի ի միուն եղբայրնոցի երկու լինել վարդապետ և կամ աւելի եւս, զմի, որ յառաջադէմն իցէ, ինքեանց գլուխ և աւագ կոչեսցն»<sup>41</sup>:

Բնական է, որ բոլոր վարդապետները նույն կարողություններն ու աստվածային շնորհը չունենային: Հայ Եկեղեցու պատմության մէջ, հատկապես Բագրատունյաց շրջանից սկսած, վարդապետների շարքերում առանձնանում են մի խումբ ավագ վարդապետներ, կամ ինչպէս Միհթար Գոշն է ասում մի այլ տեղ՝ «վկայեալ»<sup>42</sup> վարդապետներ և կամ Մեծ վարդապետներ: Ս. Գրիգոր Տաթևացու ժամանակ արդեն այս աստիճանավորումը շշշափելի էր դարձել, այնպէս որ Տաթևացին, պատրուատելով կամ խմբագրելով վարդապետական գավազան տվյալության ծիսական կարգը, երկու հիմնական աստիճանավորում է դնում վարդապետական կարգի մէջ՝ Մասնավոր վարդապետություն և Մեծ Մայրագում վարդապետություն<sup>43</sup>:

Հետաքրքրական է իմաստը նաև, թե ինչպէս են տրվել վարդապետական աստիճանները և ո՞ն կողմից: Հայ Եկեղեցու ողջ պատմության ընթացքում վարդապետական աստիճանները տրվել են վարդապետների կողմից՝ իրենց աչքի ընկնող և

արդեն պատրաստված աշակերտներին: Այդ տվյալունը կայացել է վարդապետական գալազար հանձնելով՝ հանձնիսավոր արարողությամբ, բազմության ներկայությամբ: Ս. Գրիգոր Տաթևացին այս տվյալն համար գրել է, ինչպէս ասացինք արդեն, ծիսական մի կարգ: Ապահովելու համար վարդապետների մակարդակը, Միհթար Գոշը հանձնարարում է, որ վարդապետական տվյալունը կատարվի երկու կամ երեք վարդապետների հավանությամբ<sup>44</sup>: Խակ 1651 թ. Երուսաղեմի ժողովը՝ հայոց Փիլիպպոս կաթողիկոսի, Կիլիկիո Ներսես կաթողիկոսի և Երուսաղեմի Աստվածատուղ պատրիարքի մասնակցությամբ, Հ կանոնով հանձնարարում է. «Մի համարձակեացի ոք վարդապետ անխտարար տալ զիշխանութիւն վարդապետութեան ամենայն ուժեր, եթէ ոչ իցէ նորիեալն կատարեալ ուսմամբ և առարինութեամբ և հասակաւ և աստուածակով երկիրի և վկայեալ յանձնեցունց...»<sup>45</sup>: Հստ Մաշտոցի, վարդապետական աստիճաններ տվյալը Մեծ վարդապետն է<sup>46</sup>:

Ի նկատի ունենալով վարդապետական աստիճանի բարձրությունը, այսօր Հայոց Եկեղեցին այդ տվյալն շնորհարաշխությունը վերապահում է միայն կաթողիկոսին, որի հրամանով միայն կարող են այդ աստիճանները տրվել: Եթէ կաթողիկոսը ինքը չի տալիս գավազանը, ապա հանձնարարում է այնպիսի մի նպիսկոպոսի, որ ունի Մասնավոր և Մայրագում վարդապետական աստիճանները: Մայրագում վարդապետական աստիճան չունեցող եալիսկոպոսը իրավունք չունի թեկուզն Մասնավոր վարդապետական աստիճան տալ: Այս բխում է աստվածարանական այն դրույթից, որ մեկը չի կարող բաշխել մի շնորհի, որը չունի: Բուն վարդապետը Մայրագում վարդապետն է: Խակ ստվրական վարդապետը վարդապետության թեկնածուն է միայն: Արդեն անունն է Վրան է. Մասնավոր վարդապետ: Հետուարար միայն Մասնավոր վարդապետ աստիճան ունեցողը կարող է վարդապետական աստիճաններ շնորհել:

Հայ Եկեղեցու պատմության ողջ ընթացքում, ընթիւպ մինչև ԺԹ դարը վարդապետական աստիճանը տրվել է ոչ միայն կուսակրոն, այլ նաև ամուսնացյալ քահանաներին: Այդպիսի բազմաթիվ օրինակներ կան հայ մատենագիրների մոտ, ինչպէս օրինակ, Աստղիկը հիշելով Խաչիկ Ս. Կաթողիկոսի ժամանակի վարդապետներին, հիշում է նաև «Եւ Յովհաննէս քահանայ յամուսնացելոց»<sup>47</sup>: Նոյն պատմիչը մի այլ տեղ ասում է. «Եին և վարդապետը վար-

ժեալք վարդապետութեամբն Տեառն և ուսուցիչը ճշմարտութեան: Բասիլիոս ծերունին... Եւ Գրիգոր քահանայ յամուսնացելոց՝ յորդախօսն և առատարան ի պատգամն Տեառն»<sup>48</sup>: 1500 թ. Գեղարքունիքի Խորոտիկ վանքում Գրիգոր Եսիխոպոսի ձեռքով գրված Ծաշոցի հիշատակարանում կարդում ենք. «...աւարտեցաւ գերափառ և հոգիազարդ աստուածաբան տառ վասն խնդրոյ քարեսէր և հեզանոգի Մէլիք Աւանին և որդոյ նորա Աղաքելոյնմ... ամենագովելի և երջանիկ, ընտրեալ և պատուելի, աստուածաբանոյ և ամենագովութեանց արժանաւորին Մէլիք Աւան՝ թոռն Գոյ վարդապետին, որդի տէր Մա(թ) Եռուին...»<sup>49</sup>: 1605 թ. Սուկաց Հիզան բնակվայրում գրված Ավետարանի հիշատակարանում գրիշ Հովհաննես քահանան գրում է. «աղաչեն զձեզ, յիշել ի Քրիստո և ուսուցին իմոյ՝ տէր Մարտիրոս մեծ փիլիստիային, և եղօրմ՝ տէր Սարգիս վարդապետին, և որդոցն՝ տէր Գրիգորիս վարդապետին, Յովաննէսին և Իգմասիոսին, և զաքապն իմ՝ զուէր Սարգիս մեծ վարդապետն, և զամենայն մերձաւորսն մեր»<sup>50</sup>: Բերենք նաև մի այլ վկայություն ԺԷ դարից: Գրիգոր Դարանադից 1618 թ. լինելով Կիարոսի Ս. Մակար վանքում, գրում է. «Կայ անդ ի մեր ազգացն երկու արեդայ, մեկ քահանայ Խաչատոր անուն և որ այժմ վարդապետ է»<sup>51</sup>:

Սյստեղ պետք է ընդգծել, որ վարդապետական աստիճանները, որ այսօր կարծեն Եկեղեցու պատության մեջ են անցել, երբեք շատեք է շփոթվեն նվիրապետական աստիճանների հետ: Նովմիսկ Հայ Եկեղեցու պատության հծվարին պահերին, երբ Բյուզանդական Եկեղեցին մեղադրում էր Հայ Եկեղեցուն նվիրապետական Թ աստիճանները չունենալու մեջ և երբ Հայ Եկեղեցին փորձում էր նոր աստիճաններ մոցնելով լրացնել այդ թիվը, երբեք վարդապետական աստիճանները չեն մուծվել նվիրապետական կարգի մեջ: Այսպէս օրինակ, Միխատ Գոշը Եկեղեցու ինը դասերը կարգում է հետևյալ աստիճանավորությունը. ա. Պատրիարք, բ. Սրբեական պատրիարքություն, դ. Եպիսկոպոս, ե. Քահանա կամ երեց, գ. Սարկավագ, է. Դափիր, ը. Անագանու (ընթերցող), թ. Փըսաղտ (սահմուսաց)<sup>52</sup>: Ծիշու նոյն աստիճանավորումն է տալիս նաև Ս. Օրբելյանը<sup>53</sup>:

Զետնադրության Մաշտոցի մեջ նվիրապետական աստիճանները ունեն հետևյալ կարգավորումը.

Ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն,

Յեպիսկոպոսութիւնէ ի կաթողիկոսութիւն<sup>54</sup>:

Մաշտոցի մեջ ոչ մի նշում չկա, որ ցոյց տար, թէ վարդապետական աստիճանները պատկանում են միայն կուսակրոններին:

Այդ նկատի ունենալով վերջերս արտահայտվել են բազմաթիվ լուրջ առաջարկություններ, որ վարդապետական աստիճանները բաց լինեն նաև ամուսնացյալ քահանաների առջն, մի արգելք, որ փակվել է գուստ պատահականության, հայ ժողովորի պատմության տիսոր և ողբերգական էջերի պատճառով և ոչ մի կանոնական իրավունք չի կարող արդարանալ: Ցանկանում եմ միջել այդ կարծիքներից միայն երկուը: Այսպէս, Բարգեն Ս. Վրդ. Կյունկերյանը, որ հատուկ ուսումնասիրություն է հրատարակել «Վարդապետական աստիճանները Հայ Եկեղեցու մեջ» վերնագրով, գրում է. «Վարդապետութիւնը ուրեմն՝ իր իսկ բնութեամբ, չէր կրնար միմիայն ամուրի Եկեղեցականութեան վիճակը բացատրող տիտղոս մ'ըլլալ: Ուսուցանելու, քարոզելու, առաջնորդելու, մեկ խօսքով բևի մարդը որոշող տիտղոս մըն էր այն, եւ այդ մարդը հաւասարապես կրնար գտնուիլ թէ՝ ամուրի և թէ՝ ամուսնացեալ Եկեղեցականներու մեջ»<sup>55</sup>: Իսկ ըստ Օրմանյան Սրբազնակի. «Եկեղեցին կանոնական արգելք մը դրած չէ, որ ամուսնացեալ քահանաներն ալ, երբ որ պահանջուած ուսումն ունին քարոզ խօսելու իշխանութիւն ստանան վարդապետական աստիճանով և գաւազանի սույնութեամբ»<sup>56</sup>:

Եթե Օրմանյան Սրբազնակ ժամանակ քահանաները իրավունք չունեին քարոզ խոսելու, ապա այսօր այդ ոչ միայն թույլատրություն է, այլ նաև հանձնարարվում: Մնում է վերացնել այն հակասությունը, որ ստեղծվել է այսօր, քանի որ Եկեղեցական օրենքներով վարդապետական գավազան չունեցողը իրավունք չունի քարոզելու:

Վարդապետական աստիճանը իր բարձրության վրա մնաց մինչև ԺԸ դարը: ԺԸ և ԺԹ դարերի քաղաքական անբարենրապատ պայմանների թրումով վարդապետական աստիճանները կորցնեցին իրենց դերն ու նշանակությունը: 1897 թվականին Արշակ Տէր-Միքելյանը գրում էր. «Հայաստանուաց ս. Եկեղեցին տասնըլվեց դարում ունեցել է հազարատ Եպիսկոպոսներ, մինչեւ վարդապետներ շատ սակաւ: Իսկ այժմ ամէն արենայ «վարդապետ» է դառնում, այլ և ծայրագոյն վարդապետութեան են տալիս յաճախ այն անձանց, որոնք մինչև անգամ ս. Գիրքը ծայրէ ի ծայր չեն կարդացել. մինչեւն ծայրագոյնութիւնն ու Եպիսկոպոսութիւնը պետք է միմիայն աստուածա-

բաններին վերապահուին անսպատճառ»<sup>57</sup>: Խակ Խորեն Շ. վրդ. Ստեփանեն Մովսես Խորենացու Հայոց պատմության հրատարակության առթիվ՝ 1898 թվականին, գրում է. «Երբ հոգեւորականների մէջ գիտութիւնը պակասեց, վարդապետ կոչումն եւս կորցրեց իր նույրական նշանակութիւնը, եւ ամէն միանձն հոգեւորական, արելայ ձեռնադրուելուն պէս, վկում էր վարդապետ կոչուի մինչեւ վերջին ժամանակ: Հայաստանաց Եկեղեցու նույրական կարգ եւ կանոն սիրող եւ վերանորոգող Գևորգ Դ հոգելոյս Կաթողիկոսը, ինչպէս ուրիշ բազմաթիւ Կենսական խնդիրներ, պէս ինձին եւս յարուց, վափաքելով գիտնական հոգեւորականներ ստեղծել, որի համար եւ հիմնեց Էջմիածնի Մայր Աթոռուն ճեմարան. հրամայեց որ այսուհետեւ վարդապետ կոչումն գիտութեամ իրաւութեամբ եւ առանձին օրինութեամբ ստացուի գաւազանի իշխանութեան հետ եւ նախարան այդ իրաւունք ստանալը միանձն հոգեւորականները չկոչուին վարդապետ, այլ միայն արելայ»<sup>58</sup>:

Վարդապետական աստիճանները իրենց նախկին վիճակին բարձրացնելու գործում Էջմիածնի Գևորգյան ճեմարանից բացի կայսուր դեր կատարեց նաև Արմաշի դարեվանքը: Անս թե ինչ է գրում այդ մասին նոյն դպրեկանքի շրջանավարտ և նոյն դպրեկանքում վարդապետական աստիճան ստացած Բարձեն կաթողիկոսը. «Մեր դրանքանքի հաստատութիւնը լորջ միջոց մըն էր Կ. Պոյսի Պատրիարքութեան սահմաններուն մէջ առաջը առնելու համար տիրող վարդապետական զեղծումներուն, որոնք թէեւ չափաւորուեցան զգալապէս, բայց դժբախտաբար չվերջացան: Վարդապետութիւնը (Մասնաւոր և Ծայրագոյն) Դարեկանքի մէջ իր գիտական եւ ճիշտ վարդապետական (doctorat) իմաստով կապուեցան որոշ դասընթացքի մը եւ այդ դասընթացքն եւրք ալ գրաւոր որոշ աշխատութիւններու հետ»<sup>59</sup>:

Ս. Էջմիածնի և Արմաշի դպրեկանքերը անկասկած կարող էին հասնել իրենց առջև դրած նպատակին, եթե չիներ չարարաստիկ Ս. համաշխարհային պատերազմը և Մեծ Եղեռնը:

1957 թվականին Դերենիկ եպս. Փոլադյանը ներկայացնում է մի խնամված ծրագիր՝ վարդապետական աստիճանների տվյալները վերաբերապէս:

Այս հարցը լուսուն մտահոգել է նաև մեր սիրելի Վեհափառ Հայրապետին, որն իր հայրապետության առաջին օրից ինչ հոգ է տարել, որ վարդապետական աստիճանները տրվեն միայն ճեմարանի շրջա-

նավարտներին, հասուն ուսումնասիրություն գրելոց և պաշտպանելուց հետո: Վեհափառ Հայրապետի հրահանգով և առաջարկով պէս խնդիրը քննության է առնվել Գերագոյն Հոգևոր Խորհրդի 1958 թվականի հունիսի 8-ի նիստում. «Գերագոյն Հոգևոր Խորհրդը պատագին գործնակությամբ ընդունեց Վեհափառ Հայրապետի ստացարկը և խնդիրը Խորին Սուրբ Օծությունից պատրիարք և խնդիր իստությամբ պահպան կատար՝ ըստ որի, Մասնավոր կամ Ծայրագոյն վարդապետական իշխանության աստիճան ստանալու համար թեկնածուից պահանջվում էր գրավոր մի աշխատություն՝ կրոնա-եկեղեցական, եկեղեցա-պատմագիտական և կամ եկեղեցա-քանակի համար 8-ին, Կահիրեկի Եպիսկոպոսական ժողովը իր Հ հիստում գրավվել էր եկեղեցական տիտղոսների հարցով և եկել էր այն ընդհանուր եզրակացության, որ «Տիտղոսներու տվյալներ մէջ հարկ է գործ դնել աշարջություն և ավագության, վարդապետության, ծայրագունության և արքության տիտղոսները տալ միայն սուրգապետ արժանավորներուն»<sup>60</sup>:

Ի վերջո 1980 թվականի փետրվար 27 թվակիր № 1012 Սրբատառ կոնդակով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կանոնական ուժ է տախս վերիիշյալ խնդիրին<sup>61</sup>: Այդ կոնդակում Վեհափառ Հայրապետը գրում է. «Մեր իդան է և մեր հաւատացեալ ժողովրդի արդար սպասումը, որ մեր երիտասարդ հոգևորականները, կուսակրօն թէ ամուսնացեալ քահանաներ, աւելի ու աւելի զրահեն իրենց միտքն ու հոգին՝ կրօնական ամուր հաւատքով, գիտական պատրաստութեամբ, գաղափարական նույրուածութեամբ և ազգային-հայրեասիրական գիտակցութեամբ: Մեր օրերին հետզհետեւ առաւել կարևորութիւն է ստանում հոգևորականաց կրօնա-եկեղեցագիտական լորջ պատրաստութիւնը և ընդհանուր զարգացումը:

Ահա այս մտադրութեամբ և այս ակնկալութեամբ է որ քաներկու ստարիներ ստաց 8 լուսի 1958-ին որոշեցինք մեր Եկեղեցու մէջ վերաբատաւել՝ վարդապետական աստիճանները շնորհելու աւանդական հին կարգը, նկատելով դրանք իրեն գիտական աստիճաններ և ոչ թէ պարզապէս ձևական, անբովանդակ բնոյթ կրող պարզեարաշխումներ, երբեմն նոյնիակ ողորմութեան նման շնորհուած:

Մեր որոշումն էր վարդապետական չորս

աստիճանները շնորհել այն արեղաներին, որոնք կը ներկայացնեն նուազագոյն յիսուս մեքենագրուած էջերից բաղկացած մի ինքնուրոյն աշխատասիրութիւն, որպէսզի յետ քննարկման և գնահատման յատով մի յանձնաժողովի կողմից և յետ նրա հրապարակային պաշտպանութեան, Հայրապետի հրամանով վարդապետական շորս աստիճանները շնորհուեն թեկնածուին, Օչականի Ս. Մեսրոպ Եկեղեցում, աւանդական տուչովեան արարողութեամբ:

Ծայրագոյն վարդապետութեան աստիճանների տուչովեան համար հաստատել էինք նոյն կարգը, այն տարբերութեամբ, որ թեկնածուի ներկայացրած աշխատասիրութիւնը պէտք է լինի գիտական բնոյթ կրող մի ինքնուրոյն ընդարձակ ուսումնասիրութիւն բաղկացած նուազագոյն իննուն մեքենագրուած էջերից:

Թէ՛ Մասնաւոր և թէ՛ Ծայրագոյն վարդապետութեան համար պատրաստուած աշխատասիրութիւնները պէտք է նոյնուած լինեն աստիճառաբանական, Եկեղեցագիտական, կրօնա-քարոյական, Եկեղեցա-մատենագրական կամ նման այլ նիւթերի և հարցերի»<sup>64</sup>:

Այս կարգը անհափան կերպով գործադրուել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1958 թվականից սկսած: Վերոհիշյալ կոնդակով Վեհափառ Հայրապետու պատվիրում է Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսաց դասին, որ ամեն տեղ հարգովի այս որոշումը, նախօրոք տեղեկացնելով այդմասին Մայր Աթոռ, խորհրդակցելու համար Վեհափառ Հայրապետի հետ:

Վեհափառ Հայրապետու սույն կոնդակով նաև Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների շնորհազարդ գահակալների ուշադրությանն է հանձնում «վերահաստատած և գործադրութեան դրած վերև լիւթուածը»<sup>65</sup>:

Ուրեմն, ամփոփելով, Հայ Եկեղեցու պատմութան ընթացքում վարդապետական աստիճանները երբեք չեն միահանուն «վերահաստատած և գործադրութեան դրած վերև լիւթուածը»:

Վարդապետները (քահանա, եպիսկոպոս թե կաթողիկոս) կարող են աշանակություն են ունեցել Հայ Եկեղեցուն և կարելի դեռ են խաղացել Հայ Եկեղեցու կամքում, դեկապարեկով կորթական և քարոզչական գործունեությունը, մասնակցելով դատական գործերին, ազգային-եկեղեցական ժողովներին և այլն:

Վարդապետական աստիճանները տրվել են միայն ուսայալ քահանաներին, որոնք եղել են ոչ միայն կուսակրոն, այլ նաև ամուսնացյալ:

Վարդապետական աստիճանները տրվել

են միայն Ծայրագոյն վարդապետների (վերջին երկու հարյուրամյակում՝ Ծայրագոյն վարդապետական աստիճան ունեցող եահկուուսների) կողմից:

Պատմությունը ուսումնապիրում ենք պատմությունից դասեր առնելու համար: Վարդապետական աստիճանների պատմական ուսումնասիրությունը թելադրում է Հայ Եկեղեցու իշխանությանը՝ վարդապետական աստիճանները առավել և իրենց բուն նպատակին և բարձունքին հասցնելու:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կանոնագիրք հայոց, աշխ. Վազգեն Հակոբյանի, հաստոր Բ., Երևան 1971, էջ 19:
- Յովհան Մաթիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ., Աշ. Արքահամյանի, Երևան, 1941, էջ 78:
- Փաւառուի Բուգամիդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 280:
- Անդ, էջ 46:
- Անդ, էջ 37:
- Ազգաթանգիւռայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչյան և Ստ. Կանայեանց, Տիգիս, 1909, էջ 395, 418:
- Փաւառուի..., էջ 89, 92:
- Սովորի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Արենեան և Ս. Յարութիւնեան, Տիգիս 1913, էջ 335:
- Անդ, էջ 120: Կորյուն, Վարք Մաշտոցի, հրատ. Մանուկ Արենյանի, Երևան 1941, էջ 22, 72 և այլն:
- Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն Տաճն Արծրունեաց, ի լոյն էած Ք. Դ., Ս. Պետերբուրգ 1887, էջ 81:
- Տէ՛ս Թովմա Արծրունի և Սանանուն, Պատմութիւն Տաճն Արծրունեաց (Ուսանողի գոադարան), Երևան 1984, էջ 496:
- Թովմա Մեծովեցու Թիշատակարանը, հրատ. Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս 1892, էջ 73, Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կատ Դարանադցւոյ, հրատ. Մետրոպ Վլդ. Նշանեան, Երուսաղեմ 1915, էջ 314:
- Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի..., էջ 815:
- Խաչատոր արեղայի Զողայեցւոյ Պատմութիւն Պարսից (ՃԸ Դ.), աշխ. Բարձեն վարդապետի Աղակենեանց, Վաղարշապատ 1905, էջ 153:
- Պատմութիւն Սուոքել վարդապետի Դաւիթմեցւոյ, Վաղարշապատ 1896, էջ 258:
- Թուլք ընթաճրական արարեալ երիցս կրանեալ սուրբ Հայրապետին մերոյ տևառն նկրսիսի Ծնորքաւոյ, Ս. Էջմիածին 1885, էջ 64:
- Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի..., էջ 348:

18. Կանոնք յևս առաքելոց հարամց հետեւողաց, իբ (Կանոնագիրը հայոց Ա, Երևան, 1964, էջ 110): Կանոնք Նիկողական, ԺԳ (Կանոնագիրը հայոց Ա, էջ 126): Մխիթար Գոշ, Գիրք դատաստամի, աշխ. Խոսրով Թորոսյանի, Երևան 1975, Ա, խմբ. ՀԱ, ԾԿԸ. ԾԿԹ և այլն, էջ 61, 100, 101: Եվ այլն:
19. Կանոնք սուրբ ժողովոյն որ ժողովնեցան ի Թէոդորոսապալիս, որ այժմ կոչվ Կարճոյ քաղաք (Կանոնագիրը հայոց, Բ, էջ 255):
20. Կանոնք յևս առաքելոց հարամց հետեւողաց Է (Կանոնագիրը հայոց Ա, էջ 105): Կանոնք Նիկողական Ե (Կանոնագիրը հայոց Ա, էջ 120): Կանոնք Շահապիկվանի ԺԸ (Կանոնագիրը հայոց Ա, էջ 460): Մխիթար Գոշ, Անդ, Դ, ԾԼԶ, էջ 34, 88:
21. Կանոնք Աթանասի Սոլեսանդրացոյ Ծ (Կանոնագիրը հայոց Ա, էջ 311):
22. Կանոնք Դուռաց սուրբ ժողովոյն Ե (Կանոնագիրը հայոց Բ, էջ 204):
23. Անդ Զ, էջ 205:
24. Կանոնք սրբոյն Սահմակայ հայոց Հայրապետի ԽԳ (Կանոնագիրը հայոց Ա, էջ 402):
25. Ցովհաննու Մանդակումոյ հայոց կաթողիկոսի... բան կանոնական Ա (Կանոնագիրը հայոց Բ, էջ 242): Կանոնք Ցովհաննու Մանդակումոյ հայոց կաթողիկոսի Բ (Կանոնագիրը հայոց Ա, էջ 498):
26. Կանոնք Դուռաց սուրբ ժողովոյն Է, Ը, Թ (Կանոնագիրը հայոց Բ, էջ 207—208):
27. Մխիթար Գոշ, Անդ, Նախադրութիւն, Ը, էջ 20:
28. Անդ, Դ, էջ 85:
29. Թուլթ ընդհանրական, էջ 84—85:
30. Տե՛ս Արշակ Տէր-Միթքեան, Հայաստանեաց առաքելական ուղղափառ Ա. Եկեղեցին և իր սուրբ կարգը, Վաղարշապատ 1897, էջ 186—187:
31. Տե՛ս Ա. Խ. Սովորսյան, Ուրվագծեր հայ դրաբոցի և մանկավարժության պատմության (Ժ—Ժ դարեր), Երևան 1958, էջ 350:
32. Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքրումք ի գորոց պատմագրաց յաղագ գիտության ժամանակաց անցելոց մինչև ի ներկայ ծաղկաբաղ արարեալ, Բրատ. Արշակ Տէր-Միթքեանի, Վաղարշապատ 1893, էջ 76: Մխիթարյա Ազրիվանցուցոյ Պատմութիւն հայոց, ի լուս ընծանաց Միլոտիչ Էմին, Մոսկվա 1860, էջ 49:
33. Պատմութիւն Շահանգին Սիսական, արարեալ Սուեֆաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիսեաց, Թիֆլիս, 1910, էջ 115—118:
34. Ցովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոն, աշխ. Բ. Լ. Չորբազյանի, Երևան 1974, էջ 40:
35. Անդ, էջ 51:
36. Անդ, էջ 52:
37. Թովմայի վարդապետի Արծրունոյ... էջ 72:
38. Պատմութիւն Շահանգին Սիսական, արարեալ Սուեֆաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի..., էջ 48:
39. Անդ, էջ 118:
40. Բարգէն Մ. Վրդ. Կիլէսերեան, Վարդապետական աստիճանները Հայ Եկեղեցոյ մէջ, Անդիշիան, Լիբանան 1980, էջ 124:
41. Մխիթար Գոշ, անդ, Դ, էջ 35:
42. Անդ, Դ, էջ 86:
43. Մաշոոց Զեռնադրութեան կղերիկոսաց, սարկասաց և քահանայից և օրինութեան արձայից, և տաղոյ գգաւազան Մասնաւոր և Մաշուգոյն իշխանութեան վարդապետաց, Վաղարշապատ 1876, էջ 67, 81:
44. Մխիթար Գոշ, անդ, Դ, էջ 84:
45. Պատմութիւն Առաքել Վարդապետի Դարիմեցոյ, Վաղարշապատ, 1884, էջ 255:
46. Մաշոոց, էջ 67, 75, 78 և այլն:
47. Սուեֆաննոսի Տարօնեցոյ Ասողիկան Պատմութիւն Տիեզերական, Բրատ. Առ. Մալխասեանց, Ա. Պետրորուդ 1885, էջ 186:
48. Անդ, էջ 178:
49. ԺԵ դարի Բայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան 1967, էջ 294:
50. Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, Բատոր Ա, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան 1974, էջ 181:
51. Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի..., էջ 183:
52. Մխիթար Գոշ, անդ, ՄԻԵ, էջ 185—187:
53. Պատմութիւն Շահանգին Սիսական..., էջ 107—112:
54. Մաշոոց... էջ 40, Մաշոոց Զեռնադրութեան և պիկուլպոսի, Վաղարշապատ 1876, էջ 26: Կանոն Զեռնադրութեան և Օծման կաթողիկոսի և Հայրապետի Ամենայն Հայոց, Վաղարշապատ 1876, էջ 4:
55. Բարգէն Մ. Վրդ. Կիլէսերեան, անդ, էջ 72:
56. Մատարիա արքեաս. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Ամելիխան, Լիբանան 1952, էջ 181:
57. Արշակ Տէր-Միթքեան, Հայաստանեաց առաքելական ուղղափառ Սուրբ Եկեղեցին և իր սուրբ կարգը, էջ 185—186:
58. Մոլսէ Խորենացի, Ա. Պետրորուդ 1898, էջ 487—488:
59. Բարգէն Մ. Վրդ. Կիլէսերեան, անդ, էջ 159—160:
60. «Վարդապետական գաւազամի մասնաւոր իշխանութեան տուչութիւնը կատարուելու է Բնեկանածուն պէտք է շրջանաւարտ ըլլայ ունէ Հայ նույիրապետական Աթոռի դպրովանքի մը և ունենայ ի ծեսին վկայական»:
61. Թեկնածուն պէտք է մասնաւոր Ամրէի մը

- մասին աւարտաճառ մը գրէ և նոյն այդ աւարտաճառին վրայ անցընէ նախ քերաճացի և ապա գրաւոր քննութիւն:
3. Քննութիւնը պէտք է կատարուի երկու մասնաւոր և երկու ծայրագոյն վարդապետներէ և մեկ եպիսկոպոսէ որ ծայրագոյն վարդապետութեան իշխանութիւն ունի:
  4. Մասնաւոր վարդապետութեան իշխանութիւնը կը տրուի նկողեցւոյ մէջ, ըստ Մաշտոցի տրամադրութեան, ծայրագոյն վարդապետութեան աստիճան ունեցող եպիսկոպոսէ մը, խարտավիլակութեամբ մասնաւոր կամ ծայրագոյն վարդապետի մը:
  - Վարդապետական գաւազանի ծայրագոյն իշխանութեան տուչութիւնը կատարուելու է նետկալ պայմաններով.
  1. Թեկնածուն պէտք է ունենայ վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն:
  2. Թեկնածուն պէտք է գրաւոր ընդհանուր քննութիւն՝ անցընէ աստուածաբանական, իմաստափական, նկողեցագիտական, կանոնագիտական, պատմական, Ս. գրական և մատենագրական նիւթերու շուրջ:
  3. Թեկնածուն այս քննութիւնը անցընելէն եռք միացն իրաւուք կունենայ պատրաստելու

աւարտաճառ մը որ նորութիւն բնրէ իր ընտրած նիւթի մասին:

4. Թեկնածուն քերաճացի վերջին ընդհանուր քննութիւն մը անցընելու է աւարտաճառի և անոր վերաբերեալ զանազան նիւթերու մասին:
  5. Թէ՛ գրաւոր և թէ՛ քերաճացի քննութիւնները կը կատարուին երեք մասնաւոր և երեք ծայրագոյն վարդապետներէ և մեկ եպիսկոպոս որ ծայրագոյն վարդապետութեան իշխանութիւն ունի:
  6. Ծայրագոյն վարդապետութեան իշխանութիւնը կը տրուի նկողեցւոյ մէջ, ըստ Մաշտոցի տրամադրութեան, ծայրագոյն վարդապետութեան աստիճան ունեցող եպիսկոպոսէ մը, խարտավիլակութեամբ ծայրագոյն վարդապետի մը»:
- (Պերեմիկ եպիսկոպոս, Հայաստանեաց առաքելական սուրբ Եկեղեցւոյ խորհուրդները, Պէյրութ 1957, էջ 80):
61. «Էջմիածին» 1958, Ը, էջ 3:
  62. Անդ:
  63. «Էջմիածին» 1980, Բ—Գ, էջ 3—5:
  64. Անդ, էջ 4—5:
  65. Անդ, էջ 5:

